ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

20 դեկտեմբերի 2021թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Հասմիկ Զաքարյանը:

Նիստին մասնակցում էին Նաիրի համայնքի նորընտիր ավագանու թվով 16 (տասնվեց) անդամներ՝

Գևորգ Մուրադյանը, Արմեն Համբարձումյանը, Մարգարիտա Պետրոսյանը, Նորայր Սարգսյանը, Կարեն Հարությունյանը, Անահիտ Ստեփանյանը, Աշոտ Ազիզյանը, Արման Աբրահամյանը, Վարդուհի Բարսեղյանը, Խաչիկ Իսրայելյանը, Գոռ Հայրապետյանը, Լիլիանա Հարությունյանը, Անդրանիկ Մկրտչյանը, Խոսրով Ստեփանյանը, Աննման Բաբայանը և Ռաֆիկ Զոհրաբյանը:

Նիստին չէին ներկայացել ավագանու թվով 11 (տասնմեկ) անդամներ՝

Արմեն Խաչատրյանը, Վարդան Ասատրյանը, Սոֆիկ Սիմոնյանը, Վաղարշակ Ամիրխանյանը, Արտաշես Ղարիբյանը, Անահիտ Հակոբյանը, Անահիտ Առաքելյանը, Լենդրուշ Արշակյանը, Պետրոս Ստեփանյանը, Քրիստինե Մանուկյանը և Արթուր Մուրադյանը:

Նիստն իրավազոր էր, քանի որ նիստին ներկա էին ավագանու օրենքով սահմանված թվի կեսից ավելին:

Աշխատակազմի քարտուղար Հասմիկ Զաքարյանը հայտարարեց, որ համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 64-րդ հոդվածի մինչև համայնքի ղեկավարի ընտրվելը ավագանու նիստը վարում է նիստին ներկա տարիքով ավագ անդամը:

Քանի որ ներկաներից տարիքով ավագը <<Վերակազմյալ Սոցիալ-Դեմոկրատ Հնչակյան>> կուսակցությունից ընտրված ավագանու անդամ Նորայր Խաչիկի Սարգսյանն էր՝ ուստի նա հրավիրվեց զբաղեցնելու նախագահողի տեղը և վարելու ավագանու նիստը:

Նորայր Սարգսյանը Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրի համայնքի նորընտիր ավագանու նիստը հայտարարեց բացված:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության թիվ 27 տարածքային ընտրական հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 12-ի <<Կոտայքի մարզի Նաիրի համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 5-ի ընտրությունների արդյունքներով Նաիրի համայնքի ավագանի ընտրվելու մասին» N 23-Ա որոշումը և 2021 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 40 արձանագրությունը Նորայր Սարգսյանը ներկայացրեց Նաիրի համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 5-ի համամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքում ընտրված ավագանու անդամներին.

<<Իմ հզոր համայնք>> կուսակցությունից՝

1. Համբարձումյան Արմեն Մարտիկի

2 .Պետրոսյան Մարգարիտա Իշխանի

<<Հայ Յեղափոխական դաշնակցություն>> կուսակցությունից՝

1.Մուրադյան Գևորգ Հրաչի

<<Հանրապետություն>> կուսակցությունից՝

1. Խաչատրյան Արմեն Արտավազդի
2. Ասատրյան Վարդան Զավենի
3. Վարդանյան Սոֆիկ Վեսմիրի

<<Վերակազմյալ Սոցիալ-Դեմոկրատ Հնչակյան>> կուսակցությունից՝

1. Սարգսյան Նորայր Խաչիկի
2. Հարությունյան Կարեն Յուրայի
3. Ստեփանյան Անահիտ Մելիքի
4. Ազիզյան Աշոտ Ռաֆիկի
5.Աբրահամյան Արման Ռազմիկի
6. Բարսեղյան Վարդուհի Արտաշեսի
7. Իսրայելյան Խաչիկ Գագիկի
8.Հայրապետյան Գոռ Վաչագանի
9. Հարությունյան Լիլիանա Արկադիի
10. Մկրտչյան Անդրանիկ Յուրիկի
11. Ստեփանյան Խոսրով Սամվելի

12. Բաբայան Աննման Սուրենի

13. Զոհրաբյան Ռաֆիկ Միհրի

<<Քաղաքացիական պայմանագիր>> կուսակցությունից՝

1.Ամիրխանյան Վաղարշակ Վահանի

2. Ղարիբյան Արտաշես Էդիկի

3. Հակոբյան Անահիտ Պատվականի

4. Առաքելյան Անահիտ Սարգսի

5. Արշակյան Լենդրուշ Վարդանի

6. Ստեփանյան Պետրոս Լևիկի

7. Մանուկյան Քրիստինե Ատոմի

8. Մուրադյան Արթուր Ստյոպայի

Մինչ օրակարգի հարցերի քննարկումը Նորայր Սարգսյանը տեղեկացրեց, որ համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 66-րդ հոդվածի ավագանու խմբակցությունները ստեղծվում են նորընտիր ավագանու առաջին նստաշրջանի բացման օրը՝ հետևյալ սկզբունքին համապատասխան. ավագանու անդամների մանդատների բաշխմանը մասնակցած կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի առաջադրմամբ ընտրված ավագանու անդամներն ընդգրկվում են նույնանուն խմբակցություններում:

Այսպիսով Նաիրի համայնքի ավագանու կազմում գործելու են 5 (հինգ) հետևյալ խմբակցությունները.

<<Իմ հզոր համայնք>> խմբակցություն

<<Հայ Յեղափոխական դաշնակցություն>> խմբակցություն

<<Հանրապետություն>> խմբակցություն

<<Վերակազմյալ Սոցիալ-Դեմոկրատ Հնչակյան>> խմբակցություն

<<Քաղաքացիական պայմանագիր>> խմբակցություն

Նիստը վարողը տեղեկացրեց նաև, որ խմբակցությունները սեղմ ժամկետում համայնքի ղեկավարին պետք է գրավոր ներկայացնեն խմբակցության կանոնադրությունը, անվանումը, կազմը, ղեկավարի և քարտուղարի անունները, ազգանունները ավագանու առաջիկա նիստում հրապարակելու նպատակով:

Նիստը վարողը ներկայացրեց Նաիրի համայնքի առաջին նիստի օրակարգային հարցերը.

1. Համայնքի ղեկավարի ընտրություն.

2. Համայնքի ղեկավարի երդման արարողության կարգմակերպչական հարցերի մասին որոշման ընդունում
3. Ավագանու առաջին նստաշրջանի գումարման օրվա որոշում.

Օրակարգը դրվեց քվեարկության.

Կողմ -16

Դեմ-0

Ձեռնպահ-0

Որոշումն ընդունվեց միաձայն

1. ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԸՆՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(զեկուցող՝ Ն. Սարգսյան)

Համաձայն <<Ընտրական օրենսգիրք>> Սահմանադրական օրենքի 142.2 հոդվածի նիստը վարողը ներկայացրեց համայնքի ղեկավարի ընտրման ընթացակարգը, այնուհետև յուրաքանչյուր խմբակցությանը հնարավորություն տրվեց ներկայացնելու Նաիրի համայնքի իր խմբակցության թեկնածուի անունը, ազգանունը, հայրանունը կամ իր խմբակցության անունից հայտնելու համայնքի թեկնածու չառաջադրելու մասին:

Առաջադրվեց Նաիրի համայնքի ղեկավարի մեկ թեկնածու <<Վերակազմյալ Սոցիալ-Դեմոկրատ Հնչակյան>> խմբակցության կողմից՝ Նորայր Խաչիկի Սարգսյանը:

Ելույթով հանդես եկավ Նորայր Սարգսյանը, որից հետո նիստը վարողը ներկայացրեց բաց քվեարկության անցկացման կարգը և քվեաթերթիկի նմուշը: Տպվեցին անվանական քվեաթերթիկներ: Ավագանու անդամները կատարեցին իրենց քվեարկությունը, այնուհետև նիստը վարողը յուրաքանչյուր խմբակցությունից հրավիրեց մեկ ներկայացուցիչ հետևելու քվեարկության արդյունքները հաշվարկելու և ամփոփելու գործընթացին:

1 չքվեարկած և **15** կողմ ձայներով Հայաստանի Հանրապետության Նաիրի համայնքի ղեկավար ընտրվեց Նորայր Խաչիկի Սարգսյանը:

Շնորհակալական խոսքով հանդես եկավ Հայաստանի Հանրապետության Նաիրի համայնքի ղեկավար Նորայր Սարգսյանը և շարունակեց նիստի վարումը:

2. ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

(զեկուցող՝ Հ. Զաքարյան)

Հասմիկ Զաքարյանը տեղեկացրեց, որ համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 74-րդ հոդվածի, համայնքի ղեկավարն իր լիազորություններն ստանձնում է ընտրվելուց հետո՝ երրորդ օրացուցային օրը, ավագանու՝ օրենքի ուժով հրավիրված նիստում համայնքի բնակիչներին տրված երդմամբ և հայտարարեց, որ երդման արարողությունը տեղի կունենա 2021 թվականի դեկտեմբերի 23-ին, ժամը 12:00-ին համայնքապետարանի նիստերի դահլիճում: Երդման արարողությանը հրավիրված կլինեն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, Կոտայքի մարզպետարանի, Հայ Առաքելական եկեղեցու ներկայացուցիչներ, մշակութային, հասարակական գործիչներ:

Հարցը դրվեց քվերակության.

Կողմ -16

Դեմ-0

Ձեռնպահ-0

Որոշումն ընդունվեց միաձայն

3. ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԵՂՎԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(զեկուցող՝ Հ. Զաքարյան)

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի՝ աշխատակազմի քարտուղար Հասմիկ Զաքարյանը առաջարկեց Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրի համայնքի ավագանու առաջին նստաշրջանի

գումարման օրը սահմանել 2021 թվականի դեկտեմբերի 29-ին՝ ժամը 14:30-ին, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Եղվարդ քաղաքի Երևանյան 1 հասցեում գտնվող վարչական շենքի նիստերի դահլիճում:

Հարցը դրվեց քվերակության.

Կողմ -16

Դեմ-0

Ձեռնպահ-0

Որոշումն ընդունվեց միաձայն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆԵՐ

Գևորգ Մուրադյան _____

Արմեն Հանբարձումյան _____

Մարգարիտա Պետրոսյան _____

Նորայր Սարգսյան _____

Կարեն Հարությունյան _____

Անահիտ Ստեփանյան _____

Աշոտ Ազիզյան _____

Արման Աբրահամյան _____

Վարդուհի Բարսեղյան _____

Խաչիկ Իսրայելյան _____

Գոռ Հայրապետյան _____

Լիլիանա Հարությունյան _____

Անդրանիկ Մկրտչյան _____

Խոսրով Ստեփանյան _____

Աննման Բաբայան _____

Ռաֆիկ Զոհրաբյան _____

Նիստը վարեց՝ Նորայր Սարգսյանը _____

Արձանագրեց՝ Համլիկ Զաքարյանը _____